ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-20/1-Պ

ք.Երևան «04»-ը փետրվարի 2020թ.

«Էվրի դեյ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Արման Մանասերյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է Գնորդի պատվերի հիման վրա սույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով Գնորդին մատակարարել սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված ապրանքները (այսուհետ նաև՝ Ապրանքներ), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքները և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում:

1.2 Ապրանքները մատակարարվում են Գնորդի պատվերի հիման վրա: Գնորդի պատվերի ներկայացման ձևը և ժամկետները համաձայնեցվում են Կողմերի միջև բանավոր կարգով:

1.3 Վաճառողը յուրաքանչյուր պատվերի շրջանակներում մատակարարելու է տվյալ պատվերում նշված ապրանքը, պատվերում նշված քանակով, ժամկետում, բայց ոչ ավել քան պատվերի ներկայացման օրվանից 5 (հինգ) օրվա ընթացքում, ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 հասցեում:

1.4 Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրի Հավելված 1-ով Կողմերը սահմանում են սույն Պայմանագրի շրջանակներում մատակարարվող Ապրանքների հնարավոր առավելագույն քանակը, ինչը նշանակում է, որ այն դեպքում, եթե Կողմերի միջև ձեռք չի բերվել հակառակի մասին գրավոր համաձայնություն, Վաճառողը չի ընդունի սահմանված քանակը գերազանցող Ապրանքների մատակարարման պատվեր, իսկ Գնորդը իր բացարձակ հայեցողությամբ իրավասու է տալ նշված քանակից պակաս քանակի Ապրանքների մատակարարման պատվեր, և որ սույն Պայմանագրի շրջանակներում մատակարարվող Ապրանքների վերջնական քանակը կարձանագրվի Կողմերի միջև ստորագրվող հանձնման-ընդունման ակտերով:

1.5 Վաճառողը երաշխավորում է, որ սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված Ապրանքները բավարարելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, պահանջներին:

1.6 Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

1.7 Սույն Պայմանագրով Ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքները Կողմերի միջև համաձայնեցված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում իր հայեցողությամբ հրաժարվել Ապրանքներից, կամ սահմանել Ապրանքների մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

i. պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

ii. չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքներով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.2 կետով նախատեսված տույժը.

iii. հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքների համար վճարված գումարը, եթե Ապրանքների համար արդեն իսկ վճարվել է:

2.1.3 Եթե հանձնվել են Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանքներ, ապա՝

i. պահանջել լրացնել Ապրանքների պակաս հանձնված քանակը և վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

ii. հրաժարվել հանձնված Ապրանքներից և դրանց դիմաց վճարելուց, իսկ եթե Ապրանքների համար արդեն իսկ վճարվել է՝ պահանջել վերադարձնել վճարված գումարը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

i. ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքները և հրաժարվել մնացած ապրանքներից.

ii. հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից.

iii. պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև՝ 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.5 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագիրը լուծելուց հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանքներ՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության, ինչպես նաև Ապրանքներն այլ անձից ձեռք բերելու համար Գնորդի կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերի չափով:

2.1.6 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Ընդ որում, Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

i. մատակարարվել է անպատշաճ որակի և/կամ տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

ii. Ապրանքների մատակարարման ժամկետը խախտվել է 5 (հինգ) օրից ավելի:

2.1.7 Զննել Ապրանքները և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքներից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքների պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված Ապրանքներն ընդունելու դեպքում, Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքների որակի, քանակի, տեսականու մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքների բնույթից և նշանակությունից:

2.2.5 Ապրանքների մատակարարման համար անհրաժեշտ լինելու դեպքում, Վաճառողի ներկայացուցիչներին տրամադրել Գնորդի տարածք մուտք գործելու հնարավորություն:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված Ապրանքները:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքների համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Գնորդի համաձայնությամբ Ապրանքները մատակարարել վաղաժամկետ:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի, քանակի և տեսակի Ապրանքներ՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում և հասցեով, իսկ Գնորդի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում՝ տրամադրել նաև Ապրանքների որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

2.4.2 Գնորդին հանձնել Ապրանքների պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը, եթե այդպիսիք առկա են և կիրառելի են Ապրանքների բնույթից ելնելով:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանքներ:

2.4.4 Պայմանագրի 2.1.2 կետի ii ենթակետով, 2.1.3 կետի i ենթակետով, ինչպես նաև 2.1.4 կետի iii ենթակետով նախատեսված դեպքերում, ապահովել Ապրանքների մատակարարումը՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետում:

2.4.5 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքները կամ ողջամիտ ժամկետում այլ կերպ տնօրինել դրանք և հատուցել Ապրանքները պատասխանատու պահպանության ընդունելու, դրանք իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված՝ Գնորդի կատարած անհրաժեշտ ծախսերը:

2.4.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.7 Պայմանագրի 2.1.6 կետով նախատեսված իրավիճակներում Պայմանագրի լուծման դեպքում, Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.8 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում, դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրով մատակարարման ենթակա Ապրանքների արժեքը որոշվում է սույն Պայմանագրի Հավելված 1-ում սահմանված գնացուցակով: Պայմանագրով սահմանված գնացուցակի արժեքը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից իրականացվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման ծախսերը, ինչպես նաև՝ պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

3.1.1 Կողմերը արձանագրում են, որ սույն Պայմանագրի շրջանակներում մատակարարվող Ապրանքների ընդհանուր արժեքը յուրաքանչյուր ապրանքի համար չի կարող գերազանցել սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված սահմանաչափը:

3.1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրի 3.1.1 կետով սահմանված գումարի չափով Ապրանքները մատակարարելուց հետո տեղեկացնել Գնորդին Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափի սպառման վերաբերյալ, սույն Պայմանագրի շրջանակներում չընդունել Ապրանքների մատակարարման նոր պատվերներ՝ մինչև հակառակի վերաբերյալ Կողմերի միջև գրավոր համաձայնության ձեռքբերումը:

3.1.3 Վաճառողը պարտավոր է չսկսել Գնորդի պատվերի կատարումը, եթե այդպիսի կատարումը կհանգեցնի սույն Պայմանագրի 3.1.1. կետով սահմանված սահմանաչափի անցման: Սույն կետով նշված դեպքում Վաճառողը պարտավոր է այդ մասին ծանուցել Գնորդին:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Մատակարարված Ապրանքների դիմաց վճարումն իրականացնում է ամսական հիմքով հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի երկկողմանի հաստատվելուց 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Վճարման ամսաթիվ է համարվում Գնորդի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

3.4 Բանկային ծախսերը Գնորդի բանկում կատարում է Գնորդը, իսկ Վաճառողի բանկում՝ Վաճառողը:

4. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքների որակի համապատասխանությունը կիրառելի ստանդարտների, կանոնների պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Ապրանքներն ընդունվում են Վաճառողի և Գնորդի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Յուրաքանչյուր ամսվա ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում Վաճառողը Գնորդին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե Ապրանքները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

i. հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցառումները.
ii. Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի մեկական օրինակները կամ Ապրանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե Պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում Ապրանքները կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա Ապրանքները համարվում են ընդունված և Պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը:

5.5 Եթե որևէ օրացուցային ամսվա ընթացքում Ապրանքներ չեն մատակարարվում՝ տվյալ ամսվա համար հանձնման-ընդունման ակտ և հաշիվ-ապրանքագիր չի ներկայացվում

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում Ապրանքների որակի, մատակարարման ժամկետի և տեսակի պայմանի պահպանման համար:

6.2 Ապրանքների մատակարարման համար Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի խախտման դեպքում, Վաճառողից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքների գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժը հաշվարկվում է Կողմերի միջև համաձայնեցված մատակարարման ժամկետից մինչև Կողմերի կողմից սույն Պայմանագրով համաձայնեցված ծավալներով պատշաճ որակի և տեսակի պայմանի պահպանմամբ Ապրանքները Գնորդին փաստացի հանձնելու օրն ընկած ժամանակահատվածի համար:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված բնութագրին չհամապատասխանող Ապրանքներ մատակարարելու դեպքում, Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 20 (քսան) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

6.5 Մատակարարված Ապրանքների դիմաց վճարելու սույն Պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, Գնորդի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրվելու պահից և գործում՝ մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Ապրանքների մատակարարման ժամկետը Վաճառողի խնդրանքով կարող է երկարաձգվել՝ մինչև այդպիսի ժամկետի լրանալը՝ պայմանով, որ մատակարարման ժամկետի երկարաձգման դեպքում Գնորդի մոտ չի վերանա Ապրանքների օգտագործման պահանջը:

8.3 Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

8.4 Սույն Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց Կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

8.6 Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակներում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.7 Սույն Պայմանագրի Հավելված 1-ը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

8.8 Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.9 Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

8.10 Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.11 Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.12 Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

8.15 Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող	**Գնորդ**
«Էվրի դեյ» ՓԲԸ	**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Դավիթ Բեկի 54/5	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 09104669	ՀՎՀՀ՝ 01540062
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 21700111152500	Հ/Հ՝ 2470102796740000
Արման Մանասերյան	**Մարգարիտա Գրիգորյան**
Տնօրեն	*Գործադիր տնօրեն*

Հավելված N 1
2020թ.-ի փետրվարի 04-ին կնքված
N ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-20/1-Պ պայմանագրի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

Հ/Հ	Ապրանքների անվանում և տեխնիկական բնութագիր	Չափման միավոր	Պատվիրման ենթական առավելագույն քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդհանուր առավելագույն արժեքը ՀՀ դրամ
1.	*Աղբյուրի ջուր* -Շշավորված պոլիմերային տարրայով 0.5 լ,աղբյուրի ջուր՝ չգազավորված,բաղադրությունը՝ Կալիում < 1 Նատրիում < 10 Կալցիում < 20 Մագնեզիում < 10 Հիդրոկարբոնատներ < 100 Սուլֆատներ < 10 Քլորիդներ < 20 Նիտրատներ < 10 Չոր մնացորդ < 100 pH 6.5-8.5 Ջուր ջուր ապրանքատեսակ	լիտր	3714	170	631380
2.	*Հանքային ջուր* - Շշավորված պոլիմերային տարրայով 0.5 լ գազավորված ջուր,Բաղադրությունը՝ մգ/լ Անիոններ HC03- -1500-2000 S04-- -400-650, Cl - -150-280 Կատիոններ /Na+,K+/ - 700-1000 Mg++ - 40-65, Ca ++ - 125-180,ֆտորիդ ընդհանուր հանքայնացումը, գ/լ – 3.0- 4.4, հանքային ջուր ապրանքատեսակ	լիտր	1056	330	348480

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող

«Էվրի դեյ» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Դավիթ Բեկի 54/5
ՀՎՀՀ՝ 09104669
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
Հ/Հ 21700111152500

Արման Մանասերյան
Տնօրեն

Գնորդ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Մարգարիտա Գրիգորյան
Գործադիր տնօրեն